

ԻՇ Խ ԱՆ Ա.Ց Կ Ղ Զ Ի Ք

◆◆◆◆◆

(Տիս յէ՞ 31)



Ա.Ց հեռացայ իմ նիւթէս, փա-
փաքերով պատմել, այս քանի
մը էջերու մէջ, թիւզանդիոյ
գլխաւոր ցեղափոխութիւններէ
մէկն, իտէ ինչպէս իշխանութեան
հասաւ այդ զօրաւոր ցեղն, որ անյա-
ջող կոփւներովն հանդերձ ընդդէմ ի-
տալիոյ նորմանդացւոց և փոքր Ասիոյ
թրքաց, և առաջին խաչակրաց պատ-
ճառած նեղութեանց, կայսրութիւնը
բարձրացուցին ամբողջ ժթ գարուն
մէջ, և հրէշաւոր Անդրբնիկոսի¹ ոճիր-
ներովն միայն կորան, երկե աղեկ մա-
տակարարող և ռազմանդէս կայսրներ
տալով, Ալեքսիս, Յովհաննէս և Մա-
նուկէ որոց թագաւորութիւնը, ոչ ա-
ռանց փառաց, հարիւր տարի տեսց
1084 ապրիլէն մինչև 1185 սեպտեմբեր
ամիսն: Այս ընդարձակ խառնաշրջի-
թութիւնն՝ որ խաղաղութիւն և հան-
գարտութիւն տուաւ, ԺԱ.գարուն Բիւ-
զանդիոնի, ուժով կեդրոնացուցի կա-
ռավարութեամբ, որ Ե գարուն Հոռվ-
մայ պէս բաց դաշտ մը եղած էր ա-
մէն տեսակ թեկնածուաց փառասի-
րութեանը, կին մը, դարձեալ կը

1. Անդրբնիկոս Ա. Կոթնենոս, Ալեքսիսի Ա.Հ.
թոռն, խառնակ կեանք մը ունէր և աքորի
մէջ էր, երբ Ալեքսիս Բ. Կայսր եղաւ և տա-
րուան, Անդրբնիկոս փափեց և. Պոլիս եկաւ, և
ինսամակալ եղաւ, վերն ալ Ալեքսիսը սպան-
ցի կայսր եղաւ: Իր բոնաւորութեամբ ատելի
եղած, իսահակ Անդրբնուէ աթոռէն փառ առ-
նուեցաւ, և չարացար մահուամբ մեռաւ (1185):
Սա վերջինն է Կոթնենեանց ցողին կայսերաց:

կրկնեմ, գլխաւոր թելադրիչն եղած
կ'երկնայ: Տեսնալով թէ յաղթականն
Ալեքսիս ի՞նչ մեծ յարգութիւն ունէր
իւր մօրը, ի՞նչ իշխանութիւն թողած
էր անոր ձեռքն, դիւրաւ կը գոշա-
կուի թէ ինչպիսի ազդեցութիւն ու-
նեցած է այդ հոչակաւոր իշխանու-
հին, յաղթութենէ առաջ աւելի քան
թէ վերջը: « Ալեքսիս կայսր պատ-
ռացաւ, իսահակ մեծ սերաստոս ա-
նուեցաւ, մայրերնին ալ ամեն բան
կը կարգադրէր ». միտքան կը կըր-
կընեն ժամանակակից պատմագիրք:
Առաջ հանդերձ, այս առաջին կոմ-
նենեանք, ընտանեկան սէր և միու-
թիւն աւելի ունեցած են, քան թէ
թիւզանդիոնի միւս թագաւորող ցե-
ղերն: Երկուց եղբարց առաջին
հոգն եղաւ, երթալ իրենց մայրը
առնուլ և մեծ Պալատն բերել: Ալեք-
սիս այն ժամանակ երեսուն երկեր տա-
րուան էր: Իւր առջի կնոջմէն, Ռո-
մանոս Առկիւրոսի աղջկանէն յաջոր-
դութիւն ունեցած չէր, երկրորդն
ալ գեղեցիկն եռինէ Դուքան, թէ-
պէտ չորս տարիէ 'ի վեր ամուսնա-
ցած էր, ամուլ էր: Բոլոր կոմնե-
նեանք պատիւներով փառաւորուեցան:
Իսահակ, ինչպէս ըսինք, մեծ սե-
րաստոս անուանեցաւ, տիսղոս մը՝ որ
իրեն համար հնարուեցաւ: Ադրիա-
նոս, երրորդ եղբայրը եղաւ նախա-
սերաստոս, մեծապայծառ, Արեմուեան
բանակաց մեծ ծառայ: Նիկեփոր՝
Հորրորդը, սերաստոս և նաւատորմղին
հրամանատար: Կոմնենեանց երկե

քոյրերուն մէջ, իրենց ամենէն սիրելին Մարիամն, որոն այրն էր, Մէրայէլ ջարոնացին, համանուն հայաղդի մեծ սերունդէն, եղաւ մեծ հանդերձապետ և գերսերաստոս, տիտղոս մը, զոր նայնպէս նոր հարցին 'ի նշան իրենց եղբայրական սիրոյն, Ալեքսիսի և հասհակայ քեռայրը, հոչակաւոր Մ'ելիսացին ներումն ընդունեցաւ, և անոր տրուեցաւ Սելանիկ քաղաքը. իբր իրեն առանձին ստացուածք, ուրիշ ժառանդական հկամուտներով. Պաշտօնական արարողութեանց մէջ իր կարգն նախասերաստուէն վերջն էր և հասարակաց անուանակոչութեանց մէջ երբորդ զինքն կը յիշէին, երրորդ քոյրերնին, թէոդորա, իր ամուսնոյն կոստանդին Դիոդինէսի եղերական մահուընէն վերջն, վանք քաշուած ըլլարով՝ պատիտ մը չընդունեցաւ. Մ'ինչդեռ յաղթականին ընստանիքն մեծամեծ պատիմներու հասան, Բոտանիատի կողմնակցաց հարստութիւններն ալ օտար զինուարաց բամբուեցան, որպէս զի աւարառութենէ ետ կենան, և քաղաքէն ալ ենին հեռանան և կայսերական պալատն մաս մաս բաժնեցին. մեծագոյն և գլխաւոր տեղուանքը կոմմնենեանք բնակեցան, իսկ երկրորդական կողմերն Մ'արիամ կայսրուհոյն, իւր որդւոյն և բոլոր Դուքսասեանց թողուցին.

Մարիամ Ալան, այրին երկուց կայսերաց, որք գեռ կ'ապրէին կրօնաւորական զգեստուց տակ, օսաստիկ դէմ դրաւ այս կարգադրութեանց, որ շատ վսասակար էր Դուքսասեանց, և ուզեց իւր որդւոյն հետպալատին գլխաւոր մէջ մասանցընակեր Բաւական համանական փաստերով ամբաստաննեցին զինքն, որ երբորդ անգամ մ'ալ աթուու ենիներւ փորձ փորձած էր, ջանալով Ալեքսիսի սիրան վաստըկիլ Նոյն խակ սկիզբն վարանում մը ունեցաւ Ալեքսիս Եսովնէի կայսրուհի

պակուելուն, բայց քիչ օրէն, կողմաս պատրիարքին ազգեցութեամբն պըսակման հանդէսն կատարուեցաւ:

Մ'արիամ տեսնալով բոլորովին իւր պարտութիւնն, վերջապէս յանձն առաւ Պալատէն ելնել, պայմանաւ որ իր տղան, ծիրանի հագնի, կարմրաներկով ստորագրէ¹, արարողութեանց մէջ անունը անմիջապէս կայսերմէն վերջը յիշուի, և հանդիսի մէջ կայսեր ետակէն քալէ: Խորը խրոխտ իշխանուհին Մ'անկանց² վանքն հանդիսիւ գնաց, որ իւր բնիկ ստացուածքն էր, և հոն մայրապետական քօնն գրաւ:

Այս նոր թագաւորական ցեղին հաստատութեան սկիզբն, ամեն խընդրոյ մէջ Աննա կոմմնենոսի հզօր ազգեցութիւնն կ'երեւնայ: Իրականապէս ալ այդ եռանդուն կինն եղաւ, որ կարգէ գուրս քաղաքագիտութեամբ օժտեալ, ամեն ձեռնարկութեանց կարգադրին էր: Ինքն էր որ կողմաս պատրիարքին հրաժարումը պահանջեց, կասկածելով որ վերջն գուքասեանց նորէն կոմմակցութիւնն էրնէր: Ինքն իր կայսր որդւոյն ամենամանը ձեռնարկութեանց ալ թերագրին էր. և մինչև սահման մը անոր սրտին մէջ՝ կարգաւորութեան և արգարութեան սէր մտցուց: Յազդութեանէն կերպ իրեն վերջն ուզեր էր աշխարհէս քաջուկի: Ցղպքը միափք փոխեցին այնպիսի պատշաճ և զգուշաւոր կ'երպավ իրեն հետ խորհրդակցելով, որ սկսաւ համն առնուլ հասարակաց գործոց, և քիչ ժամանակէն գրեթէ միայնակ կառավարեց: Ալեքսիս, կայ-

1. Կարմրաներկ ստորագրութիւնն թագաւորաց միայն իրաւունք էր, ինչպէս Լեւոն (Բոութիւնեան) ստորագրութիւնք կը հաւատեն:

2. Մ'անկանց վանքն Ալեքսոյուայն սկիզբն հրամակուան Սիրբէնին և կիլհանէր մէջ տեղուանը կ'իսնար, ուսկից երկաթուղին կ'անցնի, և վանքին հետան ալ մասած չէ:

սրութեան առջի տարիներն միակերպ զբաղած ըլլալով Ռորերս կիսկայի և Բոհեմիանդի Նորմանդացւոյ հետ, և Փոքր Ասից Թթվաց հետ պատերազմերու, կառավարութեան բոլոր ժանրու թիւնը մօրը վերայ թողուց :

Ոսկեկնիք հրովարտակին օրինակը, որով Ալեքսիս Աննա ֆալասոէնի կուտար լիակատար իշխանութիւն, և կը հրամայէր ամենուն, որ եղբարց բացակայութեան ատեն՝ մօրը հնազանդին, մեղի հասցուց իւր հոչակաւոր թոռը, իր մամիւն համանուն Աննա : Ալեքսիս այն հրովարտակին մէջ, սըրտաշարժ բացարութեամբ, կը յայտնէ որ իւր մօրը իմաստութեան պարտաւոր էր իւր բոլոր յաղթութիւններն, և անոր ձեռքն կը յանձնէր ամեն հասարակաց և առանձնական գործերն, իրաւունք անուանելու պաշտօնեաներն և ատենակալներն, զանոնք պաշտօնանկ ընելն, պակսեցընել և աւելցընել հարկերն, պարտաւորէ զամենքն, մեծերն ե պղտիկներն, անմիջապէս հնազանդել իշխանուհւոյն, առանց քննադատութեան, նոյն խոկի ի բերանոյ հրամաններն որք առօրին անդառնալի սեպաւին : Այդ անխոնջ միաբն ամեն բանի կը հանէր : Խնամակալուհւոյն ամեն ժամերն պահչելի կերպով կարգադրուած էին : Քիւզանդացի ամեն իշխանուհեաց պէտ ջերմեռանդ էր, զիշերուան մէկ մասն աղօթքով կ'անցընէր, արշալուսին կ'ելնէր, հրամանագիրներն գրել աւլուու պաշտօնատեաբքը ընդունելու : Կարը ներկայ կը գտնուէր ժամանացութեանց և պատարագի Աթենկի մատրան մէջ, որ իւր առանձին պալատին մերձաւոր էր, և զոր Մոնոմախոս շինել առւած էր Սըլէրէնի յիշատակին համար : Այս շէքին արսաքին տեսքն վանքի կը նմանէր : Եւր եկեղեցականաց անպանց կերակրութիւնը իշխան մասնուէր : Օրուան մացած ժաման-

նակն հասարակաց գործովք կ'զբաղէր : Այսպիսի որ էր այդ իշխանուհին, որ Ալեքսիս կոմմենոսի կայսրութեան հոգին էր, քանի որ իշխանութեան մէջն մնաց : Իր պակասութիւնն էր տիրապետական կերպն, ոչ ճկի գիտէր, ոչ կեղծել, և ոչ քաղցրութեամբ շահիւ : Զկրցաւ նոյն խոկի իր որդույն անձնասիրութիւնն ճարտարութեամբ գործածել . և երբեմն անոր հետ իրը հապատակի հետ կը վարուէր, այնչափ որ Ալեքսիս սկսաւ զայրանապ . և իւր մօրը իշխանութեան վերայ նախանձիւ : Աննա զայդ անդրադառնարով, և իր հպարտութիւնը հանդուրժելով այդպէս իշխանութիւնը պահէլ, իր մէկ շինած վանքը քաղուեցաւ Սուրբի մը պէս կը պատուէին հոն, պատուով ապրեցաւ . և խոր ծերութեան մէջ մեռաւ : Քիւզանդացիան կայսրութեան կանանց մէջ թերեւ բարձրագոյն աեղին ունի . աւելի մեծ քաղաքագէտ քան զեսինէ, աւելի բարձր մտքը, աւելի ազնուական և ազատ յաշխարհէ : Իր ջերմեռանդութիւնն խիստ էր, բայց ի սրտէ : Իր որդույն բանակն մայրագաղաքն մնած ատեն : Աարսակելի կերպով պղծած էր եկեղեցիներն, և այն աւագ հինգշաբթի օրն Աննա Դայատանի խնդրանօք՝ եպիսկոպոսաց և գլխաւոր եկեղեցականաց ժողովքն հրամանյեց քառասուն օր հասարակաց ապաշխարութիւն մը . այս միջոցին կայսրն ը մայրէն, ամբողջ կայսրական ընտանիքն, արքունիքը, և ամեն անոնք որ կերպով մը մաս ունեցած էին այդ սրբազնութեան, գետնի վերայ պակեցան, կանայք այ մասնակից եղան իրենց ամուսնաց ապաշխարութեանը : Կարգէ դուրս առսարան մը եղաւ այդ փայլուն բազմութեան խիստ ապաշխարանաց կը թութիւնը : Ամենէն նշանաւորն եղաւ Ալեքսիս : Իր զգեստին տակէն խօսքագն հագած, լոկ հողի վերայ կը պատկէր, քար մ'ալ գլխի բարձ ըրած :

Բաղդիւ բիւզանդական կնիքներու մէջ որոնց ետեւ են հնախոյզք գընտուելու, և երբեմն երբեմն Մ'ի՞ին դարու կ. պողոյ գետնին մէջ կը դժոնուին, ձեռք ինկած է Աննա Դասլասենին կնիքն : Ասային գտնուածն Արթլէն-Դորիսներ հրատարակեց. երկրորդ մը գտաւ Մորդման բիւզանդական հնութեանց գիտուն և անխոնջ խուզարկուն : Այս երկու սակաւագիւտ կնիքներու վրայի արձանագրութիւնը ըստ ամենայնի կը հաստոտեն Աննա Դալասանի թուանը պատմածներն, իր մամուն, Ա-

լիքուսի ալբունեաց մէջ ունեցած Եխանութեան և ազդեցութեան վերայ. Աննա, այս կնիքներուն վրայ անուանած է « Աննա առաջին, մայր ինքնակալի ». այս կնիքով կը գմնէր իր հրամագիրիներն, Սլէրենէի պալատան մէջ, մինչդեռ իր որդին կը պատերազմէր նորմանդացի ասպետաց դէմ Լիւրիկէի և Եպիւրոսի սահմանաց վերայ : Բատ բիւզանդական սովորութեան, ամեն նշանաւոր անձանց պէս Աննա ալ իր հօրը անունը մականուն կը գործածէր, և իր կնիքներուն վերայ կոմմենեանց անունը չյիշուիր :

Շարայարեկի



ՍՈՂՈՄՈՆ ԿԵՍԱՐ ՄԱԼԱՆ



Նոյեմբերի 25ին մեռաւ 'ի Բոռնը-մութ (Անգղիա), Սողոմոն կեսար Մալան, բողոքական աստուածաբանութեան վարդապետն, որ կեսար Մալան բժշկին որդին էր, ծնած էր 'ի Գիներա 22 ապրիլ 1812 և իւր մանկութեան ժամանակ վանդէօվր (Գաղղիա) կը բնակէր Երիտասարդ Հասակէն Երբայցիցերէն և սանսկրիտ լեզուներն սորուեցաւ : 1833ին Անդղիա անցաւ և Օքսֆորդի Սուուրբ-Ետմանտ Հայլ Համալսարանն մոռաւ, բառամ' անգղիերէն շհասկընալով. անոր համար քննութիւն տալու ժամանակ՝ խնդրեց որ իւր գրաւոր քննութիւններն տայ գաղղիերէն, գերմաններէն, սպանիական, իտալիերէն, լատիններէն կամ յունարէն լեզուներէն մէկովն, բայց ընդունելի չեղաւ : Հարկադրեցաւ անդղիերէնն ալ սորուիլ, և քըննութիւններն տալով, համալսարանն աստիճանն ընդունելէն վերջը, Մալան կալկադայի եպիսկոպոսական գը-

պրոցին (Bishop's College) վարժապետանունեցաւ. բայց Հնդկաստանի օգոսյն շկարենալով վարժիլ, 1840ին Անգղիա գարձաւ, և հոն՝ 1843ին Պէլիեօլ գպրոցին անդամ անուանեցաւ և այլեալ տեղուանք բողոքական քարոզութիւն և ժողովրդապետութիւն ըրաւ : 1880ին իտեմիուրգի համալսարանն վարդապետ աստուածաբանութեան անուանեց զինքն :

Մալան անուանի լեզուագէտ մ'էր, և միանդամանյն շատ տեղեակ բնական պատմութեան, Թույնոց հաւկիթներու հաւաքմունք մը ունէր, զոր իքարգէրի թանգարանին լնծայած էր, որ և Անդղիոյ ամենէն անուանի հաւաքածոյից կարգն է : Նշանաւոր պատկերահան մ'ալ էր, իր նկարած Պաղեստինու տեսարաններն արուեստահանդիսի մէջ շատ ընդուներութիւն գտած էր :

Իբր արեւելագէտ, իր հմութիւնն և գրութիւններն շատ նշանաւոր են.